



79. ԱՂՋԸԿՆԵՐ ՈՒ ՀԱԼՎՈՐ

Կէղնին, չէղնին՝ էրկու աղջիկ կէղնին, գելնան գիկան յաղրըրեն ջուր տանին: Հալվոր մարդ մե կը մոտենա, էն մեկից ջուր գուռ, աղջիկ հա՛մ ջուր չիտա, հա՛մ վատ ու գեշ խոսքեր կըսե հալվորուն: Հալվոր կըսե.

— Կա՛ն, աստված քըղի խելացի մարդ մե ոաստ էնե:

Մեկել աղջիկ ղթաս մեկ-էրկու հեղ կը ցողվե, ջուր կը լցե, մեկ ձեռք կը դնե վըր ուր սրտին, մեկել ձեռքով ջուր կը մոտեցու հալվորու բերնին, օր խմե: Հալվոր կը խմե, սիրտ կը հովնա, կըսե.

— Աստված քըղի ծուռ մարդ մե խամաթ էնե:

— Վա՛յ, պա՛պե, չորի՛ն ընծի անիծիր:

— Որդի՛, — կըսե հալվոր, — էն աղջիկ սարթ է ու նեղսիրտ. ընդրան խելացի մարդ մե պետք է, օր զինք շահե: Դու մլայիմ, խելացի աղջիկ իս, օր քըզի ծուռ մարդ մե առնե՛ դու զինք կը շահիս ու պահիս:

Հալվոր գընցնա կէրթա, աղջըկներ չիրար կիշկին, կառնին գուրանց ամըններ, գիկան ուրանց տներ:

